ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի 2023 թվականի ընթացքում կատարած աշխատանքների

1. Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների բնագավառ

2023 թվականի առաջին հինգ ամիսների ընթացքում դիմումների և գրությունների մոտքագրումը կատարվել է թղթային եղանակով: Այդ ժամանակահատվածում բնակիչների կողմից ստացվել է թվով 2069 դիմում և թվով 1056 գրություն:

2023 թվականի հունիս ամսից անցել ենք ՀԿՏՀ ծրագրի միջոցով գրությունների և դիմումների էլեկտրոնային մուտքագրման, այդ ընթացքում մուտքագրվել է 3306 մտից:

Նախորդ տարվա ընթացքում բնակիչներից ստացվել է 138 դիմում՝ անապահով ընտանիքներին օգնություն տրամադրելու վերաբերյալ, մերժվել է՝ 15-ը, 108 դիմում՝ դժբախտության մեջ հայտնված ընտանիքներին օգնություն տրամադրելու վերաբերյալ, 3726 դիմում՝ քաղաքաշինության ոլորտի վերաբերյալ և այլ բնույթի 2459 դիմում: Ստացված գրությունները ժամանակին պատասխանվել են:

Տարբեր հարցերով մասնակցել ենք 31 դատական նիստի, վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կայացվել է 18 որոշում, ընդունվել է համայնքի ղեկավարի 767 որոշում, արձակվել 155 կարգադրություն, կայացել է ավագանու 7 նիստ, ընդունվել՝ 117 որոշում, հրապարակվել է աշխատակազմի քարտուղարի՝ 186 հրաման, տրվել է 3756 տեղեկանք՝ ընտանիքի կազմի, բնակավայրի, ազատ ոճի և բնութագրեր:

2. Ֆինասների բնագավառ

1.Փարաքար համայնքի 2023թ. տարվա ընթացքում հավաքագրված եկամուտների վերաբերյալ հաշվետվությունը

2023թվականի ընթացքում ընդամենը վարչական բյուջեն հավաքագրվել է 1 միլիարդ 164 մլն 863.5հազ.դրամ գումար, որը կազմում է բյուջեի 95.4 %-ը: Սեփական եկամուտը՝ 677 մլն 910.8 հազ դրամ նախատեսված պլանի նկատմամբ փաստացի հավաքագրվել է 620 մլն 749.7 հազ.դրամ 91.6 %-ը:

N		Եկամուտների անվանումը	2023թ. տարեկան բյուջե	Հաշվետու ժամանակաշրջան /1-ին եռամսյակ, 1-ին կիսամյակ, 9 ամիս, **տարի**/		
Խումբ	Դասակարգ խումբ			պլան	փաստացի	կատ %
				հազ. դրամ		

		Վարչական բյուջե ընդամենը	**1221724.3**	**1221724.3**	**1164863.5**	**95.4**
1		**Ընդամենը հարկային եկամուտների**	**418800.0**	**418800.0**	**382937.28**	**91.4**
	1.1	Ընդամենը անշարժ գույք	175800.0	175800.0	163274.480	92.9
		Հողի հարկ	22800.00	22800.00	25239.369	110.7
		Գույքահարկ շինություններից	20000.00	20000.00	20502.148	102.5
		Անշարժ գույքի հարկ	133000.0	133000.0	117533.0	88.4
	1.2	Գույքահարկ փոխադրամիջոցներից	243000.00	243000.00	219662.8	90.4
2		**Ընդամենը տեղական տուրքեր այդ թվում**	**31889.51**	**31889.51**	**34265.3**	**108.5**
	2.1	Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար	6900.0	6900.0	7041.0	102.0
	2.2	Շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքներ	50.0	50.0	655.0	1310.0
	2.3	Օբյեկտները քանդելու աշխատանքներ	120.00	120.00	80.0	66.7
	2.1	Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար	6689.510	6689.510	7517.560	112.4
	2.5	Բացօթյա վաճառք կազմակերպելու	200.00	200.00	770.4	385.2
	2.6	Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի՝ առք ու վաճառք իրակ. թույլտվ.համար	50.0	50.0	0.00	0.00
	2.7	Ժամը 24-00 ից հետո աշխատելու թույլտվության	2010.0	2010.0	3822.510	190.2
	2.8	Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար	3470.0	3470.0	2943.750	84.8
	2.09	Արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար	12000.00	12000.00	11155.035	93.0
	2.	Համայնքի վարչական տարածքում	0.0	0.0	80.0	

	10	քաղաքացիական հոգեհանգստի ծիսակատարութ. ծառայությունների իրականացման և մատուցման թույլտվության համար				
	2.11	Այլ տեղական տուրքեր	400.0	400.0	200.0	50.0
		3. Պաշտոնական դրամաշնորհներ	**543813.49**	**543813.49**	**544113.85**	**100.1**
	3.1	Պետական. բյուջեից դոտացիա	538802.19	538802.19	538802.200	100.00
	3.2	Ազգային նվագարանների գծով սուբվենցիա	5011.300	5011.300	5311.646	106.0
3		**Ոչ հարկային եկամուտներ**	227221.3	227221.3	203547.1	89.6
	3.3	Օրենքով սահմանված այլ տեղական համայնքի սեփական համարվող վարձակալության վարձավճարներ	13307.0	13307.0	13829.72	103.9
	3.4	**Վարչական գանձումներ**	**206080.0**	**206080.0**	**178556.1**	**86.6**
		Ինքնակամ կառույցների օրինականացման վճար	79600.0.0	79600.0	75010.65	94.2
		Տեղական վճարներ	126480.0	126480.0	103545.416	81.9
	3,5	Վարչական իրավախախտումների եկամուտներ	1200.0	1200.0	3700.00	55.6
	3.6	Այլ Եկամուտներ	6634.346	6634.346	7461.28	112.5

		Ընդամենը վարչական բյուջե	**1221724.346**	**1221724.346**	**1164863.527**	**95.3**
		Հողի օտարումից մուտքեր	150867.581	150867.581	156400.390	103.7
	3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	0	0	800.0	0
	2.6	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	165872.416	165872.416	165872.416	100.0
		Ֆոնդային բյուջեի ազատ մնացորդ	242745.459	242745.459	242745.459	100,0
		Ընդամենը ֆոնդային բյուջե	**559485.456**	**559485.456**	**565818.265**	**101.1**
		Ընդամենը բյուջե	**1781209.785**	**1781209.785**	**1730681.8**	**97.2**
		Զուտ եկամուտ	**677910.80**	**677910.80**	**615665.334**	**90.8**

2. Փարաքար համայնքի 2023թ.բյուջեի տարեկան
ծախսերի կատարման հաշվետվությունը ըստ տնտեսագիտական դասակարգման
2023 թվականի ընթացքում ընդամենը բյուջեով կատարվել է ծախսեր 1 միլիարդ 477 մլն 883.400 հազ.դրամ, որը կազմում է ընդամենը բյուջեի 83.0 %-ը: Այդ թվում վարչական մասով ծախսերը կատարվել են 978 մլն 159.576 հազ.դրամի - 80.1 %-ը: Ֆոնդային մասով ծախսերը կատարվել են 499 մլն 723.8 հազ.դրամի - 89.3 %: 2022 թվականի ընդամենը բյուջեով կատարվել է ծախսեր 1 միլիարդ 644 մլն 737.934 հազ.դրամ, որը կազմում է ընդամենը բյուջեի 74.3 %-ը: Վարչական մասով ծախսերը կատարվել են 868 մլն 170.199 հազ.դրամ - 80.6 %-ը: Ֆոնդային մասով 776 մլն 567.734 հազ.դրամ գումարով- 68.3 %; Ընդամենը ավել ծախսեր են կատարվել՝ վարչական մասով 0.5%, Ֆոնդային մասով 21 %:

N		Ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման	2023թ. տարեկան բյուջե	Հաշվետու ժամանակաշրջան /1-ին եռամսյակ, 1-ին կիսամյակ, 9 ամիս**, տարի/**		
Խումբ	Ենթա-խումբ			պլան	փաստացի	կատ %
				հազ. դրամ		
I		**Վարչական բյուջե ընդամենը**	1221724.346	1221724.346	978159.576	80.1
1		Տեղական	431108.70	431108.70	323964.9	75.1

		ինքնակառավարում				
2		Համայնքային այլ ծառայություն	90453.850	90453.850	42614.1	47.1
3		Առողջապահություն	0.0	0.0	0.0	0.0
4		Մշակույթի տներ, ակումբներ	0.0	0.0	0.0	0.0
5		Սոցիալական ապահովություն	16000.000	16000.000	12867.100	80.4
		Հանգիստ, մշակույթ և կրոն	0.0	0.0	0.0	0.0
6		Մշակութային ծառայություններ	45000.0	45000.0	45000.0	100.0
7		Հանգստի և սպորտի ծառայություններ	20000.0	20000.0	20000.0	100.0
8		Նախադպրոցական կրթություն	281101.846	281101.846	281062.446	99.9
9		Արտադպրոցական դաստիարակություն	72622.500	72622.500	72622500	100
7		**Բնակկոմունալ տնտեսություն**	164064.946	164064.946	155517.3	94.8
	7.1	Ճանապարհների վերանորոգում	0.0	0.0	0.000	0.0
	7.2	Աղբահանում	142100.000	142100.000	135745.6	95.5
	7.3	Կեղտաջրերի հեռացում	21964.946	21964.946	19771.700	90.0
	7.4	Կանաչապատում	0.000	0.000	0.000	0.0
8		Արտաքին լուսավորում	31372.497	31372.497	24511.22	78.1
10		Պահուստային ֆոնդ	70000.000	70000.000	0.0	0.0
II		**Ֆոնդային բյուջե**	559485.456	559485.456	499723.814	89.3
	1	Շենքերի և շինություն շինարարություն	478985.457	478985.457	432472.167	90.0
	2	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	39500.0	39500.0	36846.547	93.3
	3	Վարչական սարքավորումների	20000.0	20000.0	12662.1	93.3

		ձեռք բերման ծախսեր				
	5	Տրանսպորտային սարքավորումներ	0.0	0.0	0	
	6	Նախագծահետազոտական ծախսեր	21000.0	21000.0	17743.0	84.5
I+II		**Ընդամենը ծախսեր**	1781209.785	1781209.785	1477883.389	83.0

Փարաքար համայնքի 2023 թվականի ընթացքում կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը

1. **Վարչական բյուջեից ընթացիկ ծախսեր է կատարվել ընդամենը 978 մլն 159.576 հազ դրամի, որից՝** աշխատավարձ և այլ վարձատրություններ հոդվածով՝ 277 մլն 331.0 հազ. դրամ, պարգևատրումներ դրամական խրախուսումներ հոդվածով՝ 64մլն 760.592 հազ դրամ, այլ վարձատրություններ հոդվածով 23 մլն 599.214 հազ դրամ: Էներգետիկ ծառայություններ հոդվածով կատարվել է համայնքի բնակավայրերում էլ էներգիայի և բնական գազի ծախս 31 մլն 449.679 հազ դրամի: Կոմունալ ծառայություններ հոդվածով կատարվել է ծախս 84 մլն 108.210 հազ դրամի , որից խմելու ջրի ծախս 746.710 հազ դրամ, համայնքի կոյուղագծերի խցաբացման տրանսպորտային միջոցի ծառայության ձեռք բերման համար ծախս 18 մլն 861.500 հազ դրամ, և համայնքի 9 բնակավայրերի աղբահանության ծառայության վճար «Էքս Պրոֆի» կազմակերպությանը 64 մլն 500.000 հազ դրամ:/ամսական 5375000/ՀՀ դրամ:

Կապի ծառայություններ հոդվածով կատարվել է ծախս 1մլն 883.887 հազ դրամի, որից՝ համայնքի 9 բնակավայրերի համայնքապետարանների ինտերնետ կապը ապահովելու համար Յուքոմ ՍՊԸ-ին 268.890 հազ դրամ, Արփինետ ՍՊԸ-ին 768.0 հազ դրամ, ՄՏՍ ՓԲԸ-ին 82.811 հազ դրամ, հեռահաղորդակցության կապը ապահովելու համար Տելեկոմ Արմենիա ՓԲԸ ին 105.206 հազ դրամ և փոստային ծառայություներից օգտվելու համար 613.260 հազ դրամ:

Կատարվել են ապահովագրական ծախսեր 200.0 հազ դրամի՝ KIA ծառայողական մեքենայի համար 58.0հազ դրամ, Մերսեդես- Բենց E-300 մեքենայի համար 50.0հազ դրամ, Արևաշատ բնակավայրի VAZ 2114 մեքենայի 15.0 համար հազ.դրամ: Նորակերտ բնակավայրի 867 LL 70 մեքենայի համար 47.0 հազ.դրամ, և շտապ օգնության մեքենայի համար 30.0 հազ.դրամ:

Վնասված կոյուղագծից առաջացած ջրի հեռացման համար վարձակալվել է ջրի պոմպ, որի համար վճարվել է 78.0 հազ դրամ:

Համայնքապետարանի համայնքային ծառայողների վերապատրաստման համար վճարվել է ներքին գործուղման ծախս 1 միլիոն 927.200 հազ դրամ:

Արտաքին գործուղում հոդվածով կատարվել է ծախս 250.512 հազ դրամի 5 օր Կազան քաղաք գործուղման համար:

Վարչական ծառայություններ հոդվածով կատարվել է ծախս 266.950 հազ դրամի, որից նախագծերի սկանավորման համար 256.950 հազ դրամ և շնորհակալագրերի տպագրության համար 10.0 հազ դրամ:

Համակարգչային և տեղեկատվական ծառայություններ հոդվածներով կատարվել է ծախս 3 մլն 977.750 հազ դրամի, որից՝ 1 մլն 944.0 հազ դրամ անշարժ գույքի հարկի ավտոմատացված բազայի ծրագրի համար, 1 մլն 320.0 հազ դրամ ՏՀԶՎԿ ծրագրի համար և ՀԾ Հաշվապահ-7 ծրագրի համար 190.0հազ դրամ, թափուր պաշտոնների մրցույթի ծրագիրը ձեռք բերելու համար 207.5 հազ դրամ:Հայաստանի Հանրապետություն օրաթերթում հայտարարություն տպագրելու համար 38.250 հազ դրամ: Աշխատանքայի օրենսգրքի մեկնաբանության համար 38.0 հազ դրամ, «Հայրենականչ» մարզային թերթի բաժանորդագրության համար 240.0 հազ դրամ:

Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ և նյութեր, ներկայացուցչական ծախսեր և ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդվածներով կատարվել է ծախսեր 11 մլն 502.543 հազ դրամի.

որից՝ համայնքի դպրոցների ավարտական դասարանների աշակերտների վերջին զանգի խնջույքի կազմակերպման համար յուրաքանչյուր դասարանին 100.0 հազարական դրամ ընդհանուր թվով 800.0 հազ.դրամ և ծաղկեփնջերի ձեռք բերման համար 256.5 հազ դրամ: Կազմակերպվել է համայնքի մանկապարտեզների ավարտական խմբերի համար միջոցառում ,,ՍԻՄԲԱ,, մանկական սրճարանում 990.0 հազ դրամ: Հունիսի 1-ին երեխաների պաշտպանության օրվան նվիրված կատարվել է ծախս 240.000 հազ դրամ: Ձեռք է բերվել առաջին դասարան հաճախող երեխաների համար գրենական պիտույքներ, փուչիկներ և տոպրակներ 713.160 հազ դրամ: Ձեռք է բերվել 2023թվականի զորակոչիկների համար անհրաժեշտ տնտեսական ապրանքներ 528.560 հազ դրամի և զորացրվողների համար կոնյակ, շոմպայն 101.500 հազ դրամի: Ձեռք է բերվել վարդեր կառավարության անդամների ընդունելության համար 126.0 հազ դրամ: Ավագանիների համար ծննդյան տոների կապակցությամբ ձեռք է բերվել նվեր քարտեր 11 հատ 551.400 հազ դրամի և ամանորի կապակցությամբ 606.400 հազ դրամի: Ձեռք է բերվել բռնցքամարտի և ծանրամարտի Եվրոպայի առաջնությանը մասնակցած մարզիկների համար նվեր քարտեր 10 հատ 576.200 հազ դրամի: Ֆրանկոֆոնյայի մասնակից 22 սաների համար Երևան պարկի տոմս 220.000 հազ դրամ: Կազմակերպվել է ճաշկերույթ 194.760 հազ դրամի: Հայ-Իտալական քանդակագործների միջազգային փառատոնը կազմակերպելու համար կատարվել է ծախս 2 մլն 121.000 հազ դրամ՝ որից հյուրընկալության համար 85.0 հազ դրամ, ֆուրշետի կազմակերպման համար 414.000 հազ դրամ, ռոլլափների և բանեռների տպագրության համար 588.000 հազ դրամ, լույսերի և ձայնային տեխնիկայի տեղադրման և սպասարկման համար 984.000 հազ դրամ, գեներատորի վերանորոգման համար 50.0 հազ դրամ: Կազմակերպվել է համահայկական 8-րդ փառատոնի մասնակցության համար ուղևորություն դեպի Երևանի մարզահամերգային համալիր, Գյումրի և Աշտարակ քաղաքներ, որի համար վճարվել է 400.000 հազ դրամ: «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ին է փոխանցվել 300.000 հազ դրամ 1974-2021 թթ արխիվային փաստաթղթերի պահպանման համար: Կատարվել է

սպասարկման սենյակի դռան վերանորոգում 50.000 հազ դրամ:Ձեռք է բերվել համայնքում դժբախտության մեջ հայտնված ընտանիքներն հարգանքի տուրք՝ ծաղկեպսակներ 484.0 հազ դրամի: Ուսուցչի օրվա կապակցությամբ 647.0 հազ դրամի ձեռք է բերվել Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի տոմսեր 647 հատ և նվիրվել համայնքի դպրոցների աշխատակիցներին: Ամանորի կապակցությամբ ձեռք է բերվել մանկապարտեզի երեխաների համար փափուկ խաղալիքներ 938.450 հազ դրամի և կազմակերպվել միջոցառում 285.0 հազ դրամի: Կատարվել է Փարաքարի, Բաղրամյանի, Նորակերտի և Արևաշատի վարչական շենքերի ջեռուցման կաթսաների վերանորոգում 172.0 հազ դրամի: Կազմակերպվել է Նորակերտ բնակավայրում գեոդեզիական հանույ, որի համար փոխանցվել է 200.0 հազ դրամ:

Մասնագիտական ծառայություններ հոդվածով կատարվել է ծախս 7 մլն 19.862 հազ. դրամի, որից.

Համայնքում իրականացվող՝ ապրանքների ձեռք բերման, ծառայությունների մատուցման, աշխատանքների իրականացման համար ձեռք է բերվել գնումների համակարգողի ծառայություններ, որի համար փոխանցվել է 5 մլն 400.0 հազ.դրամ: Փաստաբանական ծառայության համար վճարվել է 250.000 հազ դրամ, համայնքապետարանի օդորակիչների էկո լվացման համար վճարվել է 123.000 հազ դրամ, աշխատանքային օրենսգրքի օրենսդրության մասին սեմինարին մասնակցության համար 15.000 հազ դրամ, հայերենից ֆրանսերեն գրավոր և բանավոր թարգմանչության համար՝ 344.800 հազ դրամ, Փարաքար և Բաղրամյան գյուղերում հողի ագրոքիմիական հետազոտության համար 100.000 հազ դրամ, Հայ-Իտալական քանդակագործների միջազգային փառատոնի համար քարերի ներկրման մաքսատան ծառայության համար 204.500 հազ դրամ: Փոխանվցել է համայնքի կողմից սպասարկվող թվով 8 բաժանորդի գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման համար 210.554 հազ դրամ: Փոխանցվել է Փարաքար կայքի դոմեյնի երկարաձգման համար 17.000 հազ դրամ և ID կտրոն տրամադրման համար 52.800 հազ դրամ: Կոյուղու խցաբացման և մաքրման համար 195.000 հազ դրամ:Փոխանցվել է 100.000 հազ դրամ հակակարկտային կայանի տեխնիկական անվտանգության փորձաքննության համար: Սերվերային պահարանի տեղադրման համար 7.200հազ դրամ:

Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում հոդվածով կատարվել է ծախս 1 միլիոն 117.000 հազ դրամ, որից.

Համայնքապետարանի համակարգիչների քարթրիչների լիցքավորման համար վճարվել է 460.000 հազ դրամ, ԿԻԱ ծառայողական մեքենայի օդորակիչի և շարժիչի վերանորոգման համար 261.0 հազ դրամ, Մերսեդես Բենց E-300 ծառայողական մեքենայի փոխանցման տուփի վերանորոգման համար 240.000 հազ դրամ, Զենիթ հակակարկտային կայանի վերանորոգման համար 60.000 հազ դրամ, Բիոլճակի պոմպի վերանորոգման համար 96.000 հազ դրամ:

Գրասենյակային նյութեր և հագուստ հոդվածով կատարվել է ծախս 3 մլն 883.580 հազ դրամի, որից՝

Ձեռք է բերվել համայնքապետարանի և վարչական շրջանների աշխատակիցների աշխատանքը ապահովելու համար գրասենյակային պիտույքներ 1մլն 508.080 հազ դրամ: Փոխանցվել է համայնքի 1-ին դասարան հաճախող երեխաների համար գրենական

պիտույքների հավաքածու 828.200հազ դրամի: Հայ-Իտալական քանդակագործների միջազգային փառատոնի համար ձեռք է բերվել 9 հատ պատվանդանով դրոշ 225.000հազ դրամի: Մարզային ֆուտբոլի առաջնությանը մասնակցելու համար սպորտային հագուստ 100.000 հազ դրամի: Համահայկական 8-րդ ամառային խաղերին համայնքի մասնակության համար ձեռք է բերվել շապիկներ, տաբատներ և շորտեր 554.800հազ դրամի: Ձեռք է բերվել համայնքում մահացած անձանց հոգեհանգստի արարողությանը համայնքի կողմից որպես հարգանքի տուրք՝ ծաղկեպսակներ 667.500 հազ դրամի:

Տրանսպորտային նյութեր հոդվածով կատարվել է ծախս 6 մլն 104.200 հազ դրամի,որից՝ ծառայողական մեքենաների համար բենզին 3մլն 768.000 հազ դրամի, ավտոպահեստամասեր 1 մլն 717.000 հազ դրամի: Բիոլճակի պոմպի համար դիզելային վառելիք 619.200 հազ դրամ:

Կենցաղային և հանրային սնունդի նյութեր հոդվածով կատարվել է ծախս 5.200 հազ դրամի: Հատուկ նպատակային այլ նյութեր հոդվածով կատարվել է ծախս 11 մլն 224.560 հազ դրամի, որից՝ բիոլճակի համար 25.150 հազ դրամ, շղթայաձև սղոցի պահեստամասեր 64.200 հազ դրամ, հատուկ նպատակային նյութեր 204.830 հազ դրամ: Ձեռք է բերվել ոռոգման առուների համար մետաղական խողովակներ 672.000 հազ դրամի, Ծառերի սրսկման համար բուժանյութեր 76.900հազ դրամ, տարբեր տեսակի հատուկ նպատակային նյութեր 1 մլն 447.700 հազ դրամ, համայնքապետարանի շենքի վերանորոգման համար 360.828 հազ դրամ, Նորակերտում կարկտակայանի համար մարտկոց 33.000հազ դրամ, միաֆազ ավտոմատ, թվային ժամանակի ռելե, կերամիկական կոթառ, հոսանքի կարգավորիչ, պղնձե լար և թողարկիչ 396.550 հազ դրամ, Բաղրամյանի մանկապարտեզի պատուհանների և դռների համար ցանց 713.180 հազ դրամ, ձեռք է բերվել ԼԵԴ լուսատու լամպեր 3 մլն 732.200 հազ դրամի, փողոցային լուսավորության համար հաղորդալար 625.500 դրամ, Հայ-Իտալական քանդակագործների միջազգային փառատոնի աշխատանքների իրականացման համար հատուկ նպատակային նյութեր 439.020 հազ դրամ: Ձեռք է բերվել դրսի ծաղկամաններ հողախառնուրդով 20.500հազ դրամ և շերտավարագույրներ 80.763 հազ դրամի: Ձեռք է բերվել սպասք 430.000 հազ դրամի, Բարեկամություն և Է. Թևոսյան փողոցների հատող հատվածի ջրատարի համար մետաղյա թիթեղի ձեռք բերում 857.800 հազ դրամի, համայնքապետարանի շենքի մաքրությունը ապահովելու համար տնտեսական նյութեր 846.450 հազ դրամի, Արարատյան փողոցի կոյուղագծի փոսալցման համար բազալտե խիճ 200.000 հազ. դրամ

Սուբսիդիաներ ոչ ֆինանսական համայնքային կազմակերպություններին և ընթացիկ դրամաշնորհներ հոդվածներով կատարվել է ծախս 413 մլն 673.700 հազ դրամի որից.

Փարաքարի և Թաիրովի մանկապարտեզներին -	74 մլն 756.4 հազ դրամ,
Այգեկի մանկապարտեզին –	25 մլն 170.0 հազ.դրամ
Բաղրամյանի մանկապարտեզին -	32 մլն 457.200 հազ դրամ
Մերձավանի մանկապարտեզ -	51 մլն 381.700 հազ դրամ
Մուսալեռի մանկապարտեզ -	27 մլն 839.500. հազ դրամ
Նորակերտի մանկապարտեզ -	43 մլն 435.400 հազ դրամ

Պտղունքի մանկապարտեզ - 26 մլն 22.300 հազ դրամ
Փարաքարի արվեստի դպրոց - 67 մլն 611.200 հազ դրամ,
Փարաքարի մարզադպրոցին - 20 մլն ՀՀ դրամ
Փարաքարի մշակույթ և սպորտ - 45 մլն ՀՀ դրամ,
Փոխանցվել է Փարաքարի Արվեստի դպրոցում անվճար սովորող ազգային նվագարանների գծով աշակերտների համար ընթացիկ դրամաշնորհներ 5 մլն 11.300 հազ դրամ:

Կատարվել է այլ կապիտալ դրամաշնորհներ հոդվածով ծախս 12 մլն 928.400 հազ դրամ՝ որից Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի կողմից կազմակերպված ծրագրով կոմունալ սպասարկման տեխնիկայի ձեռք բերման համար 8 մլն 150.000 հազ դրամ համաֆինանսավորման 5 տոկոսը: Փոխանցվել է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա ՀԿ-ին Մերձավանի Երիտասարդության 39 հասցեում արհեստական խոտածածկով ֆուտբոլի խաղադաշտ կառուցելու համար 2 մլն 957.900 հազ դրամ և Մուսալեռի Ֆրանց–Վերֆելի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ին տարածքի բարեկարգման համար 1 մլն 820.500 հազ դրամ:

Այլ նպաստներ բյուջեից հոդվածով կատարվել է ծախս 12 մլն 867.100 հազ դրամի, որից վճարվել է հարազատին կորցրած թվով 108 ընտանիքի յուրաքանչյուրին 40 հազարական դրամ սոց օգնություն ընդամենը 4 մլն 320.000 հազ դրամի, վճարվել է համայնքում անապահով ընտանիքներին ֆինանսական օգնություն 7 մլն 30.0 հազ դրամ, վճարվել է կիոկուշին կարատեյի «Աշխարհի գավաթ» առաջնության մասնակցության համար Տիգրան Առաքելյանին 125.0 հազ դրամ, և ավտոդպրոց սովորող թվով 4 պատանիների ճանապարհածախս 169.6 հազ դրամ: Էջմիածնի ԵԿՄ տարածքային բաժանմունքին է փոխանցվել է 200.000հազ դրամ: Փոխանցվել է Վեռա Առաքելյանին ուսման վարձ 82.500 և §Աշխարհի երեխաները Եգիպտոսում¦ միջազգային փառատոնին Այգեկի պարային համույթի 12 սաների մասնակության համար 960.000 հազ դրամ:

Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին հոդվածով կատարվել է ծախս 773.300 հազ դրամի, որից՝ համայնքների միությանը անդամավճար 278.300 հազ դրամ, Փարաքար համայնքի լավագույն 30 մարզիկների եռօրյա հանգիստ Ծաղկաձորում 495.0 հազ դրամ:

Պարտադիր վճարներ հոդվածով կատարվել է ծախս 2 մլն 215.834 հազ դրամի, որից՝ Պտղունք գյուղի Ագաթանգեղոս, Բաղրամյան գյուղի Այգեգործների, Թումանյան և Շիրազ, Այգեկ գյուղի 2-րդ, 3-րդ, Մերձավանի 1-ին, 2-րդ 3-րդ, 4-րդ փողոցների, Մուսալեռի Նար-Դոս, Շիրազ փողոցների, Տիգրան Մեծ թաղամասի 1,2,3,4,5,6,7-րդ փողոցների գազաֆիկացման գազատար խողովակի պետական գրանցման վկայական ստանալու համար 25000-ական դրամ ընդամենը 175.000 հազ դրամ, Հայ-Իտալական քանդակագործների միջազգային փառատոնի քարերի ներկրման համար ուղեբեռի ներմուծման ավելացված արժեքի հարկ և մաքսատուրք 1 մլն 526.284 հազ. դրամ, համայնքի մանկապարտեզների լուծարման համար պետական տուրք 20000-ական դրամ և գործընթացի կասեցման համար 10000-ական դրամ ընդամենը 170.000 հազ դրամ : Փոխանցվել է համայնքային նշանակության հողատարածքների վերաբերյալ արխիվային փաստաթղթերի տրամադրման, պետական գրանցման, վկայականների արժեք և պետական տուրք 344.550 հազ դրամ :

2. Ֆոնդային բյուջեից կատարվել է կապիտալ ծախսեր 499 մլն 723.814 հազ դրամի, այդ թվում 165 մլն 873.4 հազ դրամը կապիտալ սուբվենցիա պետ բյուջեից: Փարաքար համայնքում կապիտալ շինարարությունների իրականացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննությունների համար կատարվել է ծախսեր 17 մլն 743.000 հազ դրամի, որից.

- Փարաքարի Արարատյան փողոցի կոյուղագծի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար վճարվել է 990.000 հազ դրամ,
- Մերձավանի Երևանյան 4-րդ նրբանցքի և Փարաքարի Սևանի փողոցի կոյուղագծի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար վճարվել է 1 մլն 350.000 հազ դրամ,
- Համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության համար վճարվել է 2 մլն 690.000 հազ դրամ,
- Համայնքի բնակավայրերում-Այգեկ՝ 1-ին-500մ, Նորակերտ՝ Կոմիտաս-400մ, Արևաշատ՝ Երևանյան խճուղի-650մ, Մուսալեռ՝ Բաղրամյան - 605մ, Մերձավան՝ Երևանյան խճուղի -2700մ, Մասիսի-300մ, Երիտասարդության-200մ, Պտղունք՝ Հ.Շիրազ-430մ, Թաիրով՝ Լեոյի - 200մ Արամ խաչատրյան-600մ Նարեկացի-400մ, Փարաքար՝ Էրեբունի-430մ Կոմիտաս-115մ, Վ.Սարգսյան-775մ, Բաղրամյան՝ Բաղրամյան-490մ փողոցների ասֆալտապատման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության համար վճարվել է 980.000 հազ դրամ,
- Փարաքար համայնքի Այգեկ, Նորակերտ, Արևաշատ, Մուսալեռ, Մերձավան, Պտղունք, Թաիրով, Բաղրամյան, Փարաքար բնակավայրերում ոռոգման ցանցի ընդլայնման և Փարաքարի Արարատյան փողոցի կոյուղագծի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության համար վճարվել է 1000.000 հազ դրամ,
- Թաիրով և Մերձավան բնակավայրերում լուսավորության անցկացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման համար վճարվել է 800.000 հազ դրամ:
- Մերձավանի Երևանյան, Փարաքարի Սևանի նոր կոյուղու և Թաիրովի Մամիկոնյան փողոցի ասֆալտապատման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության համար 623.000 հազ դրամ:
- Համայնքի 9 բնակավայրերում ոռոգման ցանցի ընդլայնման և 4 խորքային հորերի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում 9000.000 հազ դրամ:
- Արևաշատի մանկապարտեզի կոյուղահորի կառուցման, Բաղրամյանի բուժամբուլատորիայի, մշակույթի տան ջեռուցման համակարգի և ոռոգման ջրագծի, Մերձավանի լուսավորության աշխատանքների, Փարաքարի Է. Թևոսյան և Ռաֆֆի փողոցների կոյուղագծի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության համար վճարվել է 310.000 հազ դրամ,

Ֆոնդային բյուջեի շենքերի և շինարարությունների կապիտալ շինարարություն հոդվածով կատարվել է ծախսեր 115 մլն 843.237 հազ դրամի, որից.

- Փարաքարի Արարատյան փողոցի կոյուղագծի կառուցման համար վճարվել է 23 մլն 320.147 հազ դրամ,
- Մերձավան գյուղի 1-ին 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5.-րդ փողոցների լուսավորության համար վճարվել է 16 մլն 407.490 հազ դրամ,
- Թաիրով գյուղի Վ.Մամիկոնյան փողոցի 450մետր լուսավորության անցկացման համար վճարվել է 4000.000 հազ. դրամ,
- Բաղրամյան գյուղի ոռոգման համակարգի կառուցման աշխատանքներ 16 մլն 190.000հազ դրամ
- Պտղունք բնակավայրի Հ.Շիրազ փողոցի ասֆալտապատման աշխատանքներ 55 մլն 925.600 հազ դրամ:

Փարաքար համայնքի 2022-2023 թվականների սուբվենցիոն ծրագրերով կատարվել է ծախս 353 մլն 475.461 հազ դրամի.

«Փարաքար համայնքի Բաղրամյան բնակավայրի Այգեգործների փողոցի, Թումանյան փողոցի և Շիրազի փողոցի, Պտղունք բնակավայրի Ագաթանգեղոս փողոցի, Մուսալեռ բնակավայրի Տիգրան Մեծ փողոցի, Մերձավան բնակավայրի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ փողոցների և Այգեկ բնակավայրի 2-րդ և 3-րդ փողոցների, Փարաքար բնակավայրի Արցախի թաղամասի և Միեր Մկրտչյան փողոցի գազաֆիկացում» սուբվենցիոն ծրագրով կատարվել է ծախս 98 մլն 318.290 հազ դրամի որից՝

- Բաղրամյան բնակավայրի Այգեգործների, Թումանյան և Շիրազի փողոցների գազաֆիկացման համար վճարվել է 16 մլն 686.000 հազ դրամ,
- Մերձավան բնակավայրի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ փողոցների գազաֆիկացման համար 14 մլն 850.000 հազ. դրամ,
- Այգեկ բնակավայրի 2-րդ և 3-րդ փողոցների գազաֆիկացման համար 15 մլն 390.000 հազ. դրամ,
- Փարաքար բնակավայրի Արցախ թաղամասի և Միեր Մկրտչյան փողոցի գազաֆիկացման համար 6 մլն 771.600 հազ. դրամ:
- Մուսալեռի Տիգրան Մեծ թաղ 1,2,3,4,5,6,7-րդ փողոցների գազաֆիկացման համար 41 մլն 874.800 հազ. դրամ:
- Գազաֆիկացման աշխատանքների տեխնիկական հսկողության համար վճարվել է 1 միլիոն 508.250 հազ. դրամ:
- Գազաֆիկացման աշխատանքների հեղինակային հսկողության համար 1 միլիոն 237.640 հազ. դրամ:

«Փարաքար համայնքի Բաղրամյան, Այգեկ, Նորակերտ, Արևաշատ, Մուսալեռ, Մերձավան, Պտղունք, Փարաքար բնակավայրերում խաղահրապարակների կառուցում և գոյություն ունեցող խաղահրապարակների վերանորոգում և վերազինում» սուբվենցիոն ծրագրով կատարվել է ծախս 122 միլիոն 854.250 հազ դրամ, որից՝

- Փարաքար, Թաիրով բնակավայրում 5 հատ - 27 մլն 613.600 հազ դրամ
- Բաղրամյան բնակավայրում 1 հատ - 9 մլն 26.100 հազ դրամ
- Այգեկ բնակավայրում 2 հատ - 28 մլն 6.670 հազ դրամ
- Արևաշատ բնակավայրում 1 հատ - 9 մլն 240.000 հազ դրամ
- Մուսալեռ բնակավայրում 2 հատ - 12 մլն 915.100 հազ դրամ
- Մերձավան բնակավայրում 1հատ - 11 մլն 108.600 հազ դրամ
- Պտղունք բնակավայրում 2 հատ - 13 մլն 599.900 հազ դրամ
- Նորակերտ բնակավայրում 2 հատ - 3 մլն 842.600 հազ դրամ
- Խաղահրապարակների կառուցման տեխնիկական հսկողության համար վճարվել է 2 մլն 990.000 հազ. դրամ:
- Խաղահրապարակների կառուցման հեղինակային հսկողության համար վճարվել է 749.647 հազ. դրամ:

«Փարաքար համայնքի Բաղրամյան բնակավայրի Կոմիտաս փողոցի մի հատվածի և Փարաքար բնակավայրի Սևանի փողոցի տուֆով սալարկում» սուբվենցիոն ծրագրով կատարվել է ծախս 60 մլն 228.516 հազ դրամ:

Բաղրամյան բնակավայրի Իսահակյան, Կոմիտաս և Այգեկ բնակավայրի Երևանյան փողոցների ասֆալտապատման հեղինակային հսկողությունը վճարվել է 1 մլն 35.670 հազ դրամ:

«ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար բնակավայրի Է. Թևոսյան և Ռաֆֆու փողոցների կոյուղագծի կառուցում» սուբվենցիոն ծրագրով կատարվել է ծախս՝ 33 մլն 677.858 հազ դրամ: Աշխատանքների տեխնիկական հսկողության համար վճարվել է 280.000 հազ. դրամ, հողինակային հսկողության համար վճարվել է 234.337 հազ. դրամ:

«ՀՀ Արմավիրի մարզի Արևաշատ բնակավայրի մանկապարտեզի շենքի կոյուղագծի կառուցում և տարածքի բարեկարգում» սուբվենցիոն ծրագրով կատարվել է ծախս 35 մլն 460.900 հազ դրամ: Աշխատանքների տեխնիկական հսկողության համար վճարվել է 210.000 հազ. դրամ, հեղինակային հսկողության համար վճարվել է 170.640 հազ. դրամ:

«ՀՀ Արմավիրի մարզի Արևաշատ բնակավայրի մանկապարտեզի շենքի կառուցման աշխատանքների» սուբվենցիոն ծրագրի կատարման հեղինակային հսկողության համար վճարվել է 660.000 հազ դրամ:

Բաղրամյան բնակավայրի խմելու ջրի ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերակառուցման տեխնիկական հսկողության համար 345.000 հազ դրամ:

Վարչական սարքավորումներ հոդվածով կատարվել է ծախս 12 մլն 662.100 հազ դրամ, որից՝

Ավագանու նիստերի կազմակերպման համար ձեռք է բերվել դյուրակիր համակարգչ և տպիչ 370.800 հազ դրամի, բիոլճակի համար հորային ջրի պոմպեր և սարքավորումներ 1 մլն 765.300 հազ դրամ: Ձեռք է բերվել համայնքի վարչական շենքերի համար 18 հատ ցուցանակ՝ 540.000 հազ դրամի: Նորակերտ բնակավայրի Կոմիտաս փողոցի խաղահրապարակի համար անհրաժեշտ գույք 2 մլն 200.000 հազ դրամի: Ձեռք է բերվել 7 հատ շչակ 2 մլն 16.000 հազ դրամ, ձեռք է բերվել Բաղրամյան բնակավայրի

մանկապարտեզի համար 3 հատ դրսի տաղավար 870.000 հազ դրամի: Ձեռք է բերվել Արևաշատի մանկապարտեզի համար մահճակալներ, պահարաններ, սեղաններ և նստարաններ 4մլն 120.500 հազ դրամի և գազի հաշվիչ գնդիկավոր փական 528.500 հազ դրամ: Ձեռք է բերվել սերվերի պահարան 251.000 հազ դրամ:

3.Քաղաքաշինության, հողաշինության և գյուղատնտեսության բնագավառ

Կազմվել է 357 նախագծման թույլտվություն,

- Համաձայնեցվել է 376 նախագիծ,
- Տրվել է 354 շինարարության թույլտվություն,
- Տրվել է ավարտված շինարարության շահագործման փաստագրման 108 ակտ,
- Կայացվել է հողի գործառնական նշանակության փոփոխության 13 որոշում,
- Կայացվել է հողի նպատակային նշանակության փոփոխության 10 որոշում,
- Կայացվել է գույքային իրավունքի վերականգնման 22 որոշում,
- Կայացվել է ինքնակամ շինությունների օրինականացման 208 որոշում,
- Կասեցվել է 29 ինքնակամ շինարարություն,
- Պարբերաբար տեղեկատվություն է ներկայացվել Արմավիրի մարզպետարան, Քաղաքաշինության նախարարություն, Քաղաքաշինական պետական տեսչություն, վիճակագրական վարչություն և այլ պետական կառույցներ,
- Կազմվել և հաստատվել է 417 հողամասի հատակագիծ,
- Կատարվել է 854 հասցեների ճշտման և նոր հասցեների տրամադրման աշխատանքներ,
- Կազմվել է 4 քանդման թույլտվություն,
- Կազմվել է 100 շինարարության թույլտվության ժամկետի երկարաձգում,
- Կազմվել է քարտեզի ուղղման 136 գրություն,
- Կազմվել է թվով 35 տեղեկանք զարգացող թաղամասի վերաբերյալ,
- Կազմվել է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում ներառված չլինելու վերաբերյալ 30 տեղեկանք:
- Կատարվել է՝ Փարաքար համայնքում առկա «ընտանի» կենդանիների հաշվառում,
- Համայնքում իրականացվել է՝ ընտանի, խոշոր եղջերավոր կենդանիների «դաբաղ» տեսակի հիվանդության կանխարգելման համար անհրաժեշտ միջոցառումներ,
- Կատարվել է՝ համայնքի երկու բնակավայրերում/Բաղրամյան, Նորակերտ/ տեղակայված «ՋԵՆԻԹ» տեսակի չորս հակակարկտակայանների վերագործարկման, ընթացիկ նորոգման, փորձաքննության և կոնսերվացման աշխատանքներ,
- Համայնքում կատարվել է ծառատունկ, տնկվել են՝ շուրջ 540 հատ դեկորատիվ ծառեր,
- Համայնքի կանաչապատ տարածքների պահպանման և հիվանդությունների կանխարգելման համար ձեռք են բերվել թունաքիմիկատներ/ 7լ – Բ-58 և 9լ ԳԼԻՖՈՍ/
- Հաշվառման և հասցեների ճշգրտման աշխատանքներ են կատարվել համայնքում առկա խորքային հորերի/թվով 33 հատ/ վերաբերյալ, որոնցից գործում է՝ 11-ը , կատարվել են՝ խորքային հորի՝ պոմպի վերանորոգման աշխատանքներ,

- Համայնք – պետություն համագործակցության շրջանակներում՝ ապամոնտաժվել և նորով են փոխարինվել՝ շուրջ 1540մ երկարությամբ, 200մմ տրամագծով պլաստմասյա ոռոգման ջրագիծ,
- «Էջմիածին» ՋՕԸ-ն հետ համատեղ/համագործակգության շրջանակներում/ կատարվել են համայնքի ոռոգման ցանցերի մաքրման և վերանորոգման աշխատանքներ,
- Վերանորոգվել է՝ Մուսալեռ – Զվարթնոց գյուղերի միջակայքում գտնվող ոռոգման ջրագիծ/900մմ տրամագծով և 9մ երկարությամբ /,

Կատարվել են՝ համայնքում «Գարնանացանի» ցանքատարածությունների մակերեսների և մշակաբույսերի տեսակների հաշվառման աշխատանքներ, ըստ որի, համայնքում՝ 2023թվականի ընթացքում, գարնանացանը կազմել է՝ 169հա, իսկ ցանքատարածությունները՝ 292,18հա:

- 04.11.2023թ. համայնք է այցելել՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարը, քննարկվել է՝ գյուղատնտեսական նշանակության հողերի «խոշորացման» ծրագրի իրականացման ընթացքը՝ բնակիչների հետ:
- Պատրաստվել են՝ համայնքի գյուղատնտեսական բերքի հաշվառման/ամսեկան և տարեկան/ հաշվետվություններ:

4.Առևտրի և սպասարկման բնագավառ

- Համաձայն առևտրի, հասարակական սննդի սպասարկման ոլորտի գործունեության կանոնոնների իրականացվում է այդ ոլորտի գործունեությունը,
- Տրամադրվել է 122 թույլտվություն համայնքի տարածքում ոգելից խմիչքիների, ծխախոտի արտադրանքի վաճառքի,
- Տրամադրվել է 3 թույլտվություն բացօթյա վաճառք կազմակերպելու համար,
- Տրամադրվել է 9 թույլտվություն ժամը 24 ^{00}-ից հետո աշխատելու համար,
- Տրամադրվել է 47 թույլտվություն հանրային սննդի կազմակերպման համար:

5.Սոցիալական առաջկցության և առողջապահության բնագավառտ

Հաշվետու տարում համայնքի թվով 123 անապահով ընտանիք ստացել է ֆինանսական աջակցություն: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված չորս երեխա՝ հետևողական աշխատանքի շնորհիվ վերադարձվել են ընտանիք և հետևել ենք նրանց դպրոց հաճախելուն:

Կազմակերպվել է 2 անապահով, 2 զոհվածի, 1 հաշմանդամ ընտանիքի կանանց ընդգրկումը Մանկական զարգացման հիմնադրամի կողմից կազմակերպվող մասնագիտական դասընթացներին, որի ավարտին նրանց տրամադրվել է համապատասխան մասնագիտական գործիքներ.

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնած մեկ երեխայի տեղավորել ենք Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն ՊՈԱԿ:

Անցկացվել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 13 նիստ:

Մասնակցել ենք 32 դատական նիստի:

Պատերազմի ընթացքում համայնքի վիրավորում ստացած մեկ ընտանիք ընդգրկվել է բնակարանային պայմանների բարելավման ծրագրում:

2023 թվականի սեպտեմբերի 25-ից Արցախից բռնի տեղահանված ընտանիքներին տրվել է աջակցություն և խորհրդատվություն:

Արցախից բռնի տեղահանված ընտանիքների երեխաները մասնակցել են մի շարք ամանորյա միջոցառումների, ստացել նվերներ:

6. Բժշկական ամբուլատորիաներ

Փարաքար համայնքի 9 բնակավայրերի բնակիչներ սպասարկվում են 6 բուժ.ամբուլատորիաներում:

2023թ. ամբուլատորիաներում հաշվառված է 22203 բնակիչ, 0-18 տարեկան՝ 5552 երեխա, 18 տարեկան և բարձր տարիքի՝ 16655 բնակիչ: Ամբուլատորիայի ֆինանսավորումը կատարվում է ՀՀ առողջապահության պետական գործակալության կողմից, որը 2023 թվականին կազմել է 172.642.408 դրամ: Ամբուլատորիայում հաշվառված են 768 հաշմանդամության խումբ ունեցող անձինք, Արցախյան պատերազմի և Չեռնոբիլի 260 մասնակից: 2023 թվականին ամբուլատորիաներ կատարվել է 44340 այց, 3383 տնային այց, ստացիոնար է ուղեգրվել 1510 հիվանդ: Արձանագրվել է 150 մահ: Ամբուլատորիայում կատարվել է 796 ԷՍԳ (էլեկտրասրտագրություն), 3455 գլյուկոմետրիա: 2023թ. ըստ բժշկական ցուցումների բնակիչներին տրամադրվել են 2378 ուղեգրեր նեղ մասնագիտական խորհրդատվության և լաբորատոր գործիքային հետազոտությունների համար: 2023 թվականին անվճար և արտոնյալ պայմաններով բնակչությանը տրամադրվել է 10.421.904 դրամի դեղորայք:

Բուժ.ամբուլատորիաներում 2023 թվականին սպասարկվել է 105 հղի: Ծնված երեխաների թիվը՝ 307: Ամբուլատորիայում կատարվել է 7116 պրոֆ. պատվաստում: «Հիվանդությունների վերահսկում և կանխարգելում» պետ պատվերի շրջանակներում կատարվել է 3312 գլյուկոմետրիա (գլյուկոզայի որոշումը արյան մեջ) և 173 PAP քսուկի հետազոտություն:

7.Պաշտպանության բնագավառ

Համայնքի պահեստազորայինները ծանուցումներով տեղեկացվել են եռամսյա վարժական հավաքների վայրի, ներկայանալու ժամանակի վերբերյալ, կատարվել է զինվորական հաշվառման տվյալների ճշտում:

2023 թվականի ընթացքում հայկական բանակ զորակոչվող պատանիները տեղեկացվել են՝ մարզային տարածքային ստորաբաժանումում բժշկական զննում անցնելու մասին:

Ճշգրտվել են Փարաքար համայնքի զորահավաքային ռեսուրսների իրական թվաքանակի և որակական վիճակի մասին տվյալները:

Կազմվել է համայնքում հաշվառված 2008 թվականին ծնված պատանիների անվանացանկը և ներկայացվել Արմավիրի մարզի տարածքային ստորաբաժանում:

Ճշգրտել և Էջմիածնի զինկոմիսարիատ է ներկայացվել տեղեկատվություն համայնքի հաշվեկշռում առկա ավտոտրանսպորտային միջոցների, վառելիքա-քսուկային, լիցքավորման կայանների վերաբերյալ:

Կազմվել է համայնքի քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պլանը և կանոնադրությունը:

Փարաքար համայնքից պարտադիր զինվորական ծառայության են մեկնել թվով 44 նորակոչիկ, որոնց համայնքապետարանի կողմից տրվել են զինվորական պայուսակներ՝ առաջին անհրաժեշտության պարագաներով:

8.Մշակույթի, սպորտի և արվեստի բնագավառ

Փարաքար համայնքում գործող «Փարաքարի մշակույթի և երիտասարդության պալատ» ՀՈԱԿ-ը ընդգրկում է համայնքի 7 մշակույթի տուն և 6 գրադարան: Ընդհանուր աշխատողների թիվը՝ 25:
2023 թվականին տեղի ունեցած միջոցառումները.
հունվարի 28-ին՝ ‹‹Մշակույթի և երիտասարդության պալատ›› ՀՈԱԿ-ի դահլիճում տեղի է ունեցել Հայոց բանակի օրվան նվիրված միջոցառում,
փետրվարի 13-ին՝ կազմակերպվել է Տեառնընդառաջին նվիրված միջոցառում,
փետրվարի 15-ին՝ Փարաքար համայնքի մարզադպրոցում տեղի է ունեցել «Վարչապետի գավաթ» թենիսի սիրողական մրցաշարը,
մարզադպրոցի մարզիկները մասնակցել են Ռուսաստանի Դաշնությունում ընթացող բռնցքամարտի միջազգային մրցաշարին,
մարտ ամսին անցկացվել է «Տարվա ամփոփում » ցուցահանդեսը,
Այվազյան պարային կենտրոնի սաները մասնակցել են Բաթումիում տեղի ունեցած երաժշտական փառատոնին, իսկ մարտի 18-ին՝ Երևան քաղաքում կազմակերպված պարային մրցույթին,
ապրիլ–մայիս ամիսներին անցկացվել է «Ֆրանկոֆոնիայի օրերը Փարաքարում» միջոցառումների շարքը,
մայիսի 16-ին Թաիրովի մշակույթի տան դահլիճում տեղի է ունեցել «Բոլոր ժամանակների բանաստեղծը» խորագրով գրական-երաժշտական միջոցառում՝ նվիրված Եղիշե Չարենցին,
մայիսին «Մշակույթի և երիտասարդության պալատ» ՀՈԱԿ-ում կայացել է «ԵՍ ՀԱՆՈՒՆ ՄԵՆՔԻ» խորագրով ներմարզային մշակութային փառատոն,
Մայիս ամսին նշվել է հաղթանակի օրը,
Մայիսի 18-ին՝ թանգարանների միջազգային օրը,
Մայիսի 27-28-ը Երևանի Խաչքարերի պուրակում մասնակցել ենք «Ճանաչիր Հայաստանը» մարզային զբոսաշրջային ցուցահանդեսին,
Մայիսի 29-ին համայնքի լավագույն 9 աշակերտների համար կազմակերպվել է ճանապարհորդություն Դուբայ,
Հունիսի 1-ին Փարաքարի համայնքապետարանը, երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ, բոլոր բնակավայրերում կազմակերպել է միջոցառումներ,

հուլիսի 5-ին Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի է ունեցել Այվազյան պարային կենտրոնի հաշվետու համերգը,
2023թ հուլիսի-օգոստոս ամիսներին անցկացվել է «Արա Հարությունյանի անվան միջազգային քանդակագործության փառատոնը» PAX ARMENIKA- խորագրով,
Օգոստոս ամսին 6-ից 15 տարեկան երեխաների համար գործել է ամառային ճամբար,
Օգոստոսին մասնակցել ենք «Համահայկական 8-րդ խաղերին»,
Սեպտեմբեր ամսին կազմակերպվել է «Փարաքար համայնքի նարդու առաջնություն»,
Դեկտեմբերի 22-28-ը - Փարաքարի «Մշակույթի և երիտասարդության պալատ» ՀՈԱԿ-ի բոլոր մշակույթի տներում տեղի է ունեցել ցերեկույթ՝ նվիրված Ամանորին,
Համայնքապետարանի և Հակոբյաններ հիմնադրամի նախաձեռնությամբ համայնքի լավագույն սպորտսմենների համար կամակերպվել է 3–օրյա հանգիստ Ծաղկաձորում,
Հայաստանի Հանրապետության «Քաղաքացու օրվա» կապակցությամբ հյուրընկալել ենք ծանրամարտիկ, Օլիմպիական խաղերի չեմպիոն Հոկսեն Միրզոյանին և անցկացրել միջոցառում:
Փարաքարի մշակույթի տան նկարչական խմբակների և Փարաքարի արվեստի դպրոցի սաների հետ կազմակերպվել է ճանաչողական այց Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան,
Տարին ամփոփվել է ամանաօրյա միջոցառումների շարքով:

«Հովիկ Էդգարյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ

Աշակերտների թիվը 29.12.2023թ. –310
Աշխատողների թիվը 29.12.2023թ. – 45
01.09.2023թ. բացվել է փոքրերի երգչախումբ, երեխաների թիվը – 25:
12.09.2023թ. բացվել է սանթուրի դասարան:
02.10.2023թ. բացվել է հարվածային գործիքների դասարան:

Համերգներ

13.02.2023թ մասնակցել են Սուրբ Հարություն եկեղեցում կայացած Տիառնընդառաջի արարողությանը,
2023թ. մարտ ամսին աշակերտները մասնակցել են մի քանի մրցույթ-փառատոնների,
2023թ. ապրիլի 1-ից մինչև ապրիլի վերջ մասնակցել են Փարաքար համայնքի բոլոր մշակութային կենտրոններում կայացած Ֆրանկոֆոնիային նվիրված համերգներին,
2023թ. Մայիս ամսվա համերգներ
Մայիսի 7-ին «Արարատ» դհոլահարների համույթը մասնակցել է Avangard production-ի կողմից կազմակերպված Մայիսյան տոներին նվիրված համերգային ծրագրին՝ ստացել պատվոգրեր և մեդալներ,
Մայիսի 23-ին «Արարատ» դհոլահարների համույթը մասնակցել է Կ. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոնում՝ Կամուրջ մշակութային կենտրոնի կողմից կազմակերպված «Գարուն 2023» հեռուստափառատոնին,
Մայիսի 25-ին Փարաքարի արվեստի դպրոցում տեղի է ունեցել քանոնի դասարանական համերգ՝ դասատու Սվաջյան,
Մայիսի 27-ին և 28-ին խեցեգործության դասարանը մասնակցել է «Открой Армению» Туризм Внутренняя выставка 2023-ին, ցուցահանդեսի ժամանակ ելույթ են ունեցել դպրոցի քանոնահարների համույթը՝ դասատու Հասմիկ Գաբրիելյան,

Մայիսի 29-ին Փարաքարի արվեստի դպրոցում տեղի է ունեցել ժող. երգեցողության դասարանական համերգ՝ դասատու Սվետլանա Մնացականյան,
Մայիսի 30-ին Փարաքարի արվեստի դպրոցում տեղի է ունեցել դաշնամուրային բաժնի դասարանական համերգ՝ դասատու Լարիսա Ավետիսյան,
2023թ. Հունիս ամսվա համերգներ
Հունիսի 1-ից մինչև 16-ը դասարանական տարեվերջյան համերգներ,
Հունիսի 17-ին հաշվետու համերգ, որը տեղի է ունեցել Կոմիտասի թանգարան ինստիտուտում,
Հունիսի 2-ից մինչև 24-ը աշակերտները մասնակցել են «Փոքրիկ քայլ» երաժիշտ-կատարողների միջազգային 4-րդ մրցույթ փառատոնին,
6-ից 13 տարեկան երեխաների համար Փարաքարի արվեստի դպրոցում գործել է ամառային դպրոց,
09.09.2023թ դպրոցի սաները մասնակցել են Դիլիջանում կազմակերպված մշակութային փառատոնին,
Նոյեմբեր ամսին աշակերտները մասնակցել են մի քանի մրցույթ-փառատոնների,
Դեկտեմբեր ամսին աշակերտները մասնակցել են մի քանի մրցույթ-փառատոնների նկարահանումների:
Դեկտեմբերի 26-ին տեղի է ունեցել դպրոցի տարեվերջյան համերգը՝ «Ամանորյա ծրագրով»:

9.Փարաքար համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններ

Փարաքար համայնքում 2023թ-ին գործել է 8 մանկապարտեզ: Ընդհանուր աշխատողների թիվը եղել է 158, մանկապարտեզ է հաճախել ընդհանուր թվով 697 երեխա, գործող խմբերի քանակը՝ 25:
Նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատանքներում հատուկ տեղ է հատկացվել ազգային-հոգևոր և ժողովրդական տոներին, որոնք կազմակերպվել են ազգային խորհրդով ու բովանդակությամբ: Կարևորվել են նաև զանազան գրավիչ ժամանցներ, մարզական միջոցառումներ, սպորտլանդիաներ:
2023 թ.-ին կազմակերպվել և անցկացվել են միջոցառումներ նվիրված Հայկական բանակի օրվան, Տեառնընդառաջ տոնին, Գարնանը, Զատկի տոնին, Մայրիկին, Մայիսյան հաղթանակներին, Երեխաների պաշտպանության միջազգային օրվան, Գիտելիքի օրվան, Աշնանը, Ամանորին, ընդհանուր թվով՝ 95 միջոցառում:
Բացի վերոնշյալ միջոցառումներից պարբերաբար կազմակերպվել և անցկացվել են օրինակելի պարապմունքներ, թեմատիկ ստուգումներ տարբեր մեթոդիկաներից, իրականացվել երեխաների գիտելիքների կարողությունների և հմտությունների զարգացման մակարդակի ուսումնասիրում և վերլուծում: Պարապմունքների մասնակից են եղել նաև ծնողները, ընդհանուր թվով 97 օրնակելի պարապմունք:
Պարապմունքների բաշխումը կատարվել է համաձայն կրթական համալիր ծրագրերի: Վերահսկվել է օրվա ռեժիմի, պարապմունքների ճիշտ պլանավորումն ու անցկացումը՝ տարիքային բոլոր խմբերում:

Բացի նշված օրինակելի պարապմունքներից անցկացվել են պարապմունքներ բնության հետ անմիջական շփման միջոցով, կազմակերպվել կարճատև զբոսանքներ, ճանաչողական այցեր տեսարժան վայրեր, արշավներ՝ երեխաների մոտ բնության հանդեպ սեր ձևավորելու և զարգացնելու նպատակով, ընդհանուր թվով 28:
Կազմակերպվել են տիկնիկային ներկայացումներ, ընդհանուր թվով 27 ներկայացում:
Կարևորելով մանկավարժական համակազմի որակական բարելավումը՝ ուսումնական հաստատություններում իրականացվել են մանկավարժական կադրերի հետ խորհրդատվություններ, անցկացվել մեթոդժամեր, ընդհանուր թվով 34 մանկավարժական խորհրդի նիստեր՝ կայացվել համապատասխան որոշումներ:
2023թ.-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՆՈՒՀ-երի աշխատակիցների մի մասը մասնակցել է «Նախադպրոցական ուսումնական հաստատության՝ մանկավարժական աշխատողների համար իրականացվող վերապատրաստման դասընթացին» և ստացել համապատասխան վկայական:
Նոյեմբեր ամսին ՆՈՒՀ-երի դաստիարակների հետ կազմակերպվել է փորձի փոխանակում՝ անցկացվել է համակցված պարապմունք Նորակերտի մանկապարտեզում:
Պարբերաբար ձևավորվել և նորացվել են բնության անկյունները, խմբասենյակները, միջանցքները, բակերը: Պատրաստվել են դիտողական և տեղեկատվական նոր նյութեր:
Կազմակերպվել են անհատական զրույցներ, խորհրդատվություններ նոր ընդունված երեխաների ծնողների հետ, անցկացվել ծնողական ժողովներ, ծնողական խորհրդի նիստեր՝ ընդհանուր 43 ծնողական ժողով:

10. Շինարարական աշխատանքներ

2023 թվականին ՀՀ Կառավարության կողմից հաստատվել է Փարաքար համայնքի կողմից ներկայացված թվով 3 սուբվենցիոն ծրագիր՝
1. Փարաքար բնակավայրի Է. Թևոսյան և Ռաֆֆու փողոցների կոյուղագծի կառուցում,
2. Փարաքար բնակավայրի Է. Թևոսյան փողոցի տուֆով սալարկում,
3. Փարաքար համայնքի Այգեկ, Բաղրամյան և Փարաքար բնակավայրերի փողոցների ասֆալտապատում: Ծրագրերից իրականացվել է 100%-ով՝ «Փարաքար բնակավայրի Է. Թևոսյան և Ռաֆֆու փողոցների կոյուղագծի կառուցում», 85%-ով՝ «Փարաքար համայնքի Այգեկ, Բաղրամյան և Փարաքար բնակավայրերի փողոցների ասֆալտապատում», քանի որ ասֆալտապատվող փողոցներից մեկում՝ Փարաքարի Արարատյան փողոցում առաջ են եկել ենթակառուցվածքների խնդիրներ, ինչի հետևանքով աշխատանքները տեղափոխվել են 2024 թվական, և դեռևս չի իրականացվել «Փարաքար բնակավայրի Է. Թևոսյան փողոցի տուֆով սալարկում» ծրագիրը, քանի որ հայտարարված մրցույթները չեն կայացել մասնակից չլինելու պատճառով: